ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՆԴԵՊ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ (CALWORKS) ԿԱՐԵՎՈՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՑԱՆՑԻ ԵՎ ՄԻԱՅՆ ԵՐԵԽԱՅԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՈՐՈՇ ԳՈՐԾԵՐԻ ՄԱՍԻՆ

Երեխայի աջակցության կանոնները փոխվել են Ձեր ընտանիք համար: Դուք CalWORKs կանխիկ աջակցություն եք ստանում միայն Ձեր երեխայի (երեխաների) համար: Ահա Ձեզ վերաբերող փոփոխությունները.

- Երեխայի աջակցության Ձեր իրավունքները չեն փոխանցվի վարչաշրջանին, սակայն կան օգուտներ Ձեզ և Ձեր երեխայի (երեխաների) համար՝ Ձեր երեխայի աջակցության գործը վարչաշրջանի Երեխայի աջակցության տեղական գործակալությունում (Local Child Support Agency, LCSA) ունենալով:
- Ձեր դրամաշնորհի գումարը չի փոփոխվի, եթե չեք ցանկանում ստանալ LCSA-ի երեխայի աջակցության ծառայություններ, ներառյալ Ձեր երեխայի (երեխաների) համար ոչ խնամակալ ծնող գտնելը կամ Ձեր երեխայի (երեխաների) նկատմամբ հայրություն/մայրություն հաստատելը:
  - Պետք է տեղեկացված լինեք, որ ոչ խնամակալ ծնող գտնելը կամ հայրություն/մայրություն հաստատելը կօգնի Ձեզ ապագայում երեխայի աջակցության ստանալու հարցում, եթե անհրաժեշտ է, և
  - Ապագայում, եթե Դուք Ձեր երեխայի (երեխաների) գործով իրավունակ դառնաք կանխիկ դրամական աջակցության համար, կարող են կիրառվել երեխայի աջակցության այլ կանոններ:
- Դուք կարող եք պահպանել ոչ խնամակալ ծնողի կողմից Ձեզ տրվող կամ LCSA-ի կողմից Ձեզ համար հավաքագրված երեխայի աջակցության ամբողջ գումարը: Դուք ստիպված չեք լինի վերադարձնել այն վարչաշրջանին:
- Մարդիկ երեխայի աջակցությունը ստանում են տարբեր եղանակներով: Որոշների համար դրանք հավաքագրվում են վարչաշրջանի կողմից, որից հետո LCSA-ն իրենց է ուղարկում, իսկ որոշները դրանք ուղղակիորեն ստանում են NCP-ից:
  - Եթե Դուք LCSA-ում երեխայի աջակցության արդեն իսկ բաց գործ ունեք, կարիք չկա որևէ բան անել՝ Ձեր երեխայի աջակցությունը շարունակաբար ստանալու համար:
  - Անկախ նրանից, թե ինչպես եք ստանում Ձեր երեխայի աջակցությունը, հետևեք Ձեր կողմից ստացվող երեխայի աջակցության գումարներին և թե երբ եք դրանք ստանում: Դա անհրաժեշտ է, որպեսզի վարչաշրջանին զեկուցեք ստացված երեխայի աջակցության գումարների մասին, եթե Ձեր գործով կանոնները պահանջում են եկամտի հայտարարագրում:
- Եթե Դուք LCSA-ում երեխայի աջակցության արդեն իսկ բաց գործ չունեք, Դուք պետք է դիմեք LCSA-ի երեխայի աջակցության ծառայությունների համար՝ անհրաժեշտության դեպքում երեխայի հանդեպ հայրությունը/մայրությունը հաստատելու և Ձեր երեխայի աջակցությունը հավաքագրելու և Ձեզ ուղարկելու համար: Վարչաշրջանը կարող է օգնել Ձեզ այդ հարցում:
- LCSA-ի կողմից հավաքագրված և Ձեզ ուղարկված երեխայի աջակցությունն այլևս չի փոխհատուցում Ձեր ընտանիքին վճարված աջակցությունը, այնպես որ մեծահասակի 60-ամսյա CalWORKs-ի ժամանակացույցն այլևս դադարում է «չնշել» աջակցության ամիսները:
- Եթե Դուք Ձեր երեխայի (երեխաների) աջակցության եկամուտ եք ստանում CalWORKs-ից, յուրաքանչյուր ամիս մենք չենք հաշվարկի առաջին $100-ը, եթե մեկ երեխա ունեք աջակցության խմբում (assistance unit, AU) կամ յուրաքանչյուր ամիս $200, եթե AU-ում ունեք մեկից ավելի երեխա: Մնացածը կարող է հաշվարկվել Ձեր CalWORKs դրամաշնորհի համար:
- Եթե Դուք նաև CalFresh եք ստանում, երեխայի աջակցության համար ստացվող ցանկացած եկամուտ կարող է օգտագործվել՝ Ձեր CalFresh-ի նպաստները հաշվարկելու համար:

Եթե հարցեր ունեք, անմիջապես զանգահարեք Ձեր վարչաշրջան: